կերտներին շարքերով նստացրել էր ծառերի տակ, մերկ գետնի վրայ: Փոքրիկ ուսանողները աւելի նայում էին փողոցի անցուդարձ անողների վրայ, քան մի բան էին սովորում: Բայց Սիմոն պատոելիի հոգէառ ճիպոտը ստիպում էր նրանց՝ աչքերը չհեռացնել գրքից: Այսօր նա զբաղոած էր ինչ-որ նախապատրաստութեամբ. մի խումբ աշակերտների երգել էր տալիս, իսկ ինքը, նրանց մօտ կանգնած, յանգով շարժում էր ձեռքի ճիպոտը եւ իր անախորժ ձայնով ուղղում էր եղանակը: Փողոցի անցուդարձ անողներից շատերը, այնտեղ կանգնած, լսում էին: Ես էլ հետաքրքրոեցայ եւ կանգնեցի նրանց մօտ: Պատոելին ճանաչեց ինձ, եւ մի առանձին պարծենկոտութեամբ, դառնալով դէպի ինձ, ասաց.

— Տեսնո՞ւմ ես, ինչպէս բլբուլի նման երգում են:

Ես ոչինչ չպատասխանեցի: Նա դարձաւ դէպի խմբոած մարդիկը.

— Վանեցիք իմ յարգը չեն հասկանում. մինչեւ այսօր ո՞վ էր տեսել այսպիսի դպրոց: Այնտեղ, Վարագում էլ դպրոց կայ, բայց սատանայական բաներ են սովորեցնում եւ ձեր որդիներին հաւատքից հանում են: Այստեղ մի ուրիշ դպրոց էլ բացոեցաւ. աղջիկներին էին սովորեցնում. տեսա՞ծ բան է, աղջիկը ո՛ւր, կարդալը ո՛ւր: Աստոած յաջողեց, որ շուտով փակոեցաւ, թէ չէ, ձեր աղջիկները գլխներին ֆէս կը դնէին եւ ձեզ կասէին՝ մենք տղամարդ ենք, իսկ դուք մեր կնիկները, գնացէք թոնիր վառէք, հաց թխէք, կերակուր եփէք, որ մենք ուտենք: — Այդպէս չէ՞, ուղիղ չե՞մ ասում:

Շատերը բաժանեցին պատոելիի կարծիքը: Նրա խօսքը տէր Եղիշէի դժբախտ օրիորդական դպրոցի մասին էր, որի կեանքը այնքան կարճատեւ եղաւ: Պատոելին շարունակեց.

— Ախար նա ինքն ի՞նչ էր իմանում, որ ինչ սովորեցնէր: Մի անգամ մի բան հարցրի, Զաքարիայի նման պապանձոեցաւ, չկարողացաւ պատասխան տալ: Ասացի՝ դէ գնայ, տէրտէր, այսուհետեւ ինձ ճանաչիր:

Ունկնդիրներից ոմանք սկսեցին թախանձել պատոելիին, թէ ի՞նչ էր հարցրել: Նա նրանց հետաքրքրութիւնը երկար տանջելուց յետոյ վերջապէս ասաց.

— Հարցրի, թէ այն ո՞ւմ էշի ծնօտն էր, որով Սամսոնը երեք հարիւր մարդ կոտորեց:

— Այդ շատ դժոար հարց է, — լսելի եղաւ ամէն կողմից: — Դուք մեզ չէ՞ք ասի:

— Ինչպէ՞ս կասեմ: Պոլսում մի կարմիր ոսկի եմ տոել մի վարժապետի, որ այդ ինձ սովորեցրել է, եւ որքան այդպիսի բաներ գիտեմ, որ Սողոմոն